ՄԵԾ ԾՕԲԵԼԵԱՆԸ

Անցեալ 1912 թ. հոկտ. 13-ից արդէն բացուել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ։ ամեն տեղ, հայութեան բոլոր շրջաններում, 1500-ամեայ տառերի գիւտի և 400-ամեայ հայ տպագրութեան համազգային քաղաքակրթական մեծ տօնը—յոբելեանը, եկեղեցական և դպրոցական հանդէսներով։

ԳԷՈՐԳ Դ.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Այս համազգային Մեծ Ծօբելեանի համար ժամանակ էր նշանակուած մի ամբողջ տարի—1912 թ. հոկտ. 13-ից մինչև 1913 թ. հոկտ. 12-ը, որի ընթացքում կազմակերպուեցին դպրոցներում և ազգային հաստատութիւնների մէջ երեկոյթներ, ցերեկոյթներ, համերգներ, դասախօսութիւններ ժողովրդի և աշակերտութեան համար, այլև կատարուեցին ճանապարհորդութիւններ դէպի Օշական, ուր գտնուում է Սուրբ Մեսրոպի գերեզմանը։

Սա մի խելացի, հեռատես և նպատակայարմար կարգադրութիւն էր, որով արդէն ամեն մի առարկութիւն, պատճառաբանութիւն և տրտունջ չքանում էին մէջտեղից, և միութեան ու համերաշխ գործելու ուղին հարթուած էր։

Մի տարին բաւական միջոց էր մտածելու, ժողովներ անելու, յոբելենական մասնաժողովներ կազմելու և ծրագիրներ մշակելու համար, թէ ինչպէս կարելի կլինի յաւերժացնել այդ ազգային պատմական մեծ տօնը մի բարենպատակ ձեռնարկութեամբ։

Եւ դպրոցական ֆոնդը մի կարևոր և անհրաժեշտ միջոցը համարուեց անմահացնելու Ս. Սահակ և Ս. Մեսրոպի երկու իրարից անբաժան անունները։

Ծօբելեանական տարին փակուում է այսօր Ս. Էջմիածնում ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Հրաւէրենք կարդում ամբողջ հայութեան՝ առանց դաւանանքի խորութեան չմնայել իրենց լուման այդ մեծ գործի համար։

ԱՆՊԱՏՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ՎԱՐՄՈՒՆՔ

Զգիտենք ինչ անուն տալ այն անպայման տգեղ ու դատապարտելի վարմունքին, որ թոյլ է տուել իրեն Թիֆլիզի հայ գրողների ընկերութիւնը։

Կատարում է Համազգային Ծօբելեան, որոշուած է կազմել այդ առթիւ միայն դպրոցական ֆոնդ։ Մի ամբողջ տարի այդ ընկերութիւնը փորձեց յաւերժացման խնդիրը լուծել տալ իրեն նպաստաւոր ձևով, որ հոգևոր վարչութիւնը պաշտօնապէս ժողովարարութիւն կատարէ եթէ ոչ ամբողջապէս իր համար, գոնէ դպրոցական ֆոնդի կողքին նաև իր օգտին՝ իբրև զրական ֆոնդ։ Սակայն չյարգուեց խնդիրը. Ամենայն Հայոց Կաթողիկոսը շատ իրաւամբ նպատակայարմար համարեց չկապել համազգային կրթական գործը մի մասնաւոր, շատ որոշ գունաւորումն ունեցող ընկերութեան բաղդի հետ, մանաւանդ որ ժողովրդի դիտակից ուլյան խաւերը պահանջում էին ամեն կողմից միայն և միմիայն դպրոցական ֆոնդ։

Եթէ այդ մարդոց մէջ շիտակութեան նշոյլ անգամ լինէր, պէտք է որ այս հանդիսաւոր օ

ին իրենց ձայնն ևս միացնէին ժողովրդի և Հայրապետի ձայնին, անկեղծ կոչ կարդային իրենց համախոհներին ընդառաջ գնալու դպրոցական ֆոնդի գաղափարին, հրաւիրէին չզլանալու իրենց լումաները մեր մատաղ սերնդի կրթութեան համար։

«Հորիզոն» թերթը—որ Թիֆլիզի գրողների ընկերութ. շահերի թարգմանն էր և կատաղի կռիւ էր մղում նրանց հետ միասին դպրոցական ֆոնդի դէմ,—սրանից միքանի օր առաջ տպուած առաջնորդողում՝ մի առանձին մեծահոգութեամբ հրաւէր կարդաց իր ընթերցողներին յաւերժացնել այս պատմական օրը այնպէս՝ ինչպէս որոշուած է—այն է՝ նպաստել դպրոցական ֆոնդի ստեղծելուն, քանի որ հասարակում գրական ֆոնդի խնդիր չկայ։ Թւում էր, թէ գոնէ վերջին րոպէին մենք առանց տարաձայնութեան կարող էինք մասնակցել Մեծ Յօբելեանին։ Սակայն սխալուած ենք. ահա հէնց ազնակատարութեան նախօրեակին Թիֆլիզի գրողների վարչութիւնը հրատարակում է «Հորիզոն»-ում և առանձին թերթիկներով իր կոչը՝ գրական ֆոնդի համար։ Մինչ կարելի է երևակայել աւելի նեղսիրտ ու փոքրոգի քայլ, ամբողջապէս ծծուած վրիժառութեան զգացմունից, քան իրեն թոյլ է տուել Թիֆլիզի գրողների ընկերութեան վարչութիւնը։ Եթէ այդ քայլը արուած լինէր իսկապէս ընկերութեանը մի ծառայութիւն մատուցանելու, ապա չէր կարելի արդեօք մի փոքր յետաձգել «կանոնադրութեան առաջին յոդուածի եօթներորդ կէտի» գործադրութիւնը կամ վերապահել մի այլ «պատեհ ժամանակի» նման դիմումները։

Ոչ, հայ գրողների ընկերութեան շահերի պաշտպաններին չի հետաքրքրում գրական գործը. նրանց համար գրական ֆոնդ կը կազմուի թէ չի կազմուի՝ այդ միևնոյն է, որովհետև եթէ նրանք գրական ֆոնդի համար աշխատէին, այդպիսի կերպարանք չէին տայ իրենց ժողովարարութեան խնդրին։ Նրանց համար այս ամբողջ խնդիրը մի տեսակ սխալ հասկացած պատուոյ և կեղծ ինքնասիրութեան խնդիր է։

Եւ ահա՝ դլուխները կորցրած հրապարակ են նետւում և վանգում են ոչ միայն իրենց ընկերութեան վարկը, «գրական ֆոնդի» խնդիրը, այլև խանգարում, փորձում են խանգարել մեր դպրոցների ապահովութեան գաղափարի իրականացումը։



Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՏԵՍՈՒՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

—

Հայ ազգը ղեկավարող անձինք իրենք կարծես թէ զուրկ են արժանապատուութեան զգացումից և այդ պատճառով ազգի արժանապատուութիւնն էլ քաշքըշում են հրապարակներում։

Ազգը ղեկավարող այդ պարոնները մի տարի առաջ մեծ շառաչիւնով, ազմկալի գոռումգոչումներով նորոգեցին «Հայկական խնդիրը» և նրա գոյութիւնը արհեստական կերպով երկարատև չինելու համար էլ ոչ մի միջոցի առաջ կանգ չառան։

Հայերէն լրագիրները լիփ-լեցուն էին վերջին տարին Թիւրքիայից թիւրքահայ բարբառով գրած այնպիսի թղթակցութիւններով, որտեղ իրենց կառավարութեան հասցէին ուղղուած էր յանդիմանութիւն, տրտունջ, ծաղր, նախատինք, հայհոյանք։ Թղթակիցները ծածկանուններով էին ստորագրում իրենց գրութիւնները, այդ թղթակցութիւնները հրատարակող լրագիրներն էլ Թիւրքիոյ սահմաններից դուրս էին. այդ պատճառով թէ գրողը և թէ հրատարակողը իրենց անձը պատժից ու վրէժից ազատ էին համարում և օրն օրի վրայ աւելի սանձարձակ դառնում։ Մտածող չկար, թէ իրենց—այդ ծածկանուն քաջերի—պատռած բերան թղթակցութիւնների պատճառով կամ նրանց հայհոյանքները հրատարակող լրագիրների պատճառով՝ Թիւրքիոյ ամ-